

## ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՏԱՌԱՊԱՆՔԻ ԵՐԿԻՐԸ.

«Եկ, Տէր Յիսուս, ողորմեա մեզ,  
Ողորմոթեան ժամ է արդէն,  
Եկ, Բարեխնամ, այց արա մեզ,  
Այցելոթեան ժամ է արդէն»:  
Պատարազամատոյց.

Ծով տանջանքների մէջ զօտուած հայը անթիւ դրժ-  
բախտ օրեր է անցկացրել, պատմական ճակատագրական  
շրջաններ է ապրել, Յաղկերտների և Շահ-Արասների սոս-  
կալի խժդժութիւններն է տեսել, բայց մեր տաճկահայ  
եղբայրների ու քոյրերի ներկայ պատմական ճակատա-  
գրական ճգնաժամը կարծես թէ վեր է մինչև այժմ եղած-  
ներից և իրականապէս հրատարակի վրայ է դրուած նոցա  
«Անել ու շինելու» հարցը: Կարսդ է լինել հայութեան  
համար տեղի լուրջ վայրկեան, քան ներկայումս է: Այլ  
ևս կառկտծից դուրս է և ոչ մի շափազանցութիւն չկայ,  
եթէ առենք՝ որ Հայաստանի գետերը յորդացել են մեր  
եղբայրների ու քոյրերի արիւնից կազմուած գետակներով,  
սար ու ձոր լցուել են այդ դժբախտների դիակներով,  
իրականացել է Տաճիկ կտորավարութեան դժոխային ծրա-  
սիրը, բնաջինջ անել հայութիւնը Հայաստան երկրից: Այս  
պատմական ժամին՝ կարծես քարացել են մեր չղերը՝  
չորացել են մեր արցունքները՝ և միայն տոլաւինելով առ  
ամենաողորմածն Աստուած լուս կերուով մրժնջում ենք  
ու երգում «Եկ, Տէր Յիսուս, ողորմեա մեզ, ողորմոթեան  
ժամ է արդէն, Եկ Բարեխնամ, այց արա մեզ, այցելու-  
թեան ժամ է արդէն»: Հայը դարերի ընթացքում յուսա-  
հատութեան ժամերին այս երդն է երգել և սուրբ պա-  
տարագի վերջում երգուող այս երդն պէտք է երգենք  
այժմ—հայ ժողովրդի այս տանջալից ժամին:

Օր չէ անցնում, որ ազգիս վշտացեալ Տ. Տ. Գէորգ  
Երդ Վեհափառ Կաթուղիկոսն չստանայ հայ Ժողովողի  
տանջալից կեանքի մասին զանազան սրտաճմլիկ տեղե-  
կութիւններ։ Ամեն տեղ կատարւում են բանտարկութիւն-  
ներ, սպանութիւններ, գիւղերի աւերումն և հայ ժողովրդի  
զաղթը դէսլի զանազան անմարդաբանակ երկիրներ, ուրիշ  
խօսքով Տաճիկ Կառավարութիւնը իրագործում է իւր այս  
դժոխային ծրագիրը. «Հայկական խնդիրը միանգամ ընդ միշտ  
վերջացնելու համար հայաբնակ վեց նահանգներու եւ Կի-  
ւկիոյ հայովթիւնը մեծ մասամբ փոխադրել ուժի հարաւ,  
Միջազնորի այն մասը, որ կը զտնուի Հալէսլի եւ Մուսուլի  
մէջ. եւ ուր կը ընակին այժմ արար եւ քիւրու աշխրաթներ»:\*)

Այս դժոխային ծրագիրն իրագործելով՝ նշանակում է  
բնաշինջ անել հայութիւնը։

Պատմական այս կարեոր ճղնաժամում մեզնից իւրա-  
քանչիւրը պէտք է իւր բարոյական պարաքը կատարի դէսլի  
իւր տանջուող տաճկահայ եղբայներն ու քոյրերը՝ ով ին-  
չով կարող է։ Անտարբեր գտնուել դէսլի նոցա սոսկալի  
վիճակն՝ այդ հաւասարագօր է ոճրագործութեան։

Առանց յուսահատուելու պէտք է ամեն տեղ ամենա-  
լայն չափով կազմակերպել օգնութիւն մատակարարելու  
գործը։ Որքան որ մեր ժողովուրդն ծանրաբեռնուած է  
զանազան հոգսերով, այնուամենայնիւ պէտք է չխնայենք  
մեր նիւթական և բարոյական կարողութիւնը՝ անենք աւե-  
լին՝ քան պէտքն է, որովհետեւ լուրջ և ծանր է ըոսէն։

Հետզհետէ երկրի խորքից աւելի մեծ քանակութեամբ  
զաղթականներ են զալիս մեզ մօտ՝ պէտք է մեր ոյժերն  
լարենք և աշխատենք սնունդ և բժշկական օգնութիւն  
հասցնել այդ ակամայ հիւրերին։

Կրկին մեր գիւղական ժողովուրդն պէտք է հիւրըն-  
կալի նըանց, և մեր հարուստներն պէտք է այս անդամ  
աւելի լայն չափով օգնեն այդ թշուառներին։

Մինչև այժմ մեր հարուստների արած դոհարերու-

\*) Տես սոյն համարում էջ 456։

թիւնը համեմատաբար շատ չնշին է եղել, վերջապէս պարտաւոր են նոքաներկայ լուրջ ճգնաժամին ցոյց տալ խոշոր չափով օդնութիւն ազգային մեծ գործին։ Հարուստների դրամներն այժմ աւելի քան մեծ նպատակի պէտք է ծառայեն։

Գիւղերում մեր քահանաներն և ուսուցիչները պէտք է քրիստոնէական այս վսեմ գործի գլուխն անցնեն։ Համաշխարային պատերազմն առաջ է բերել սոսկալի աւերածութիւններ և թշուառութիւններ, մենք ևս պէտք է հաշտուենք ներկայ հանգամանքների հետ, լարենք մեր ոյժերը և կատարենք մեր բարոյական սկարտականութիւնները դէպի ընդհանուր թշուառներն և մասնաւորապէս դէպի մեր տանջուած հայ եղբայրներն ու քոյրերն։ Ազգային ու քրիստոնէական մարդասիրութեան գաղափարներն այստեղ զուգորդւում են՝ օգնել այդ թշուառներին յանուն մեր հայութեան, օգնել այդ խեղճերին յանուն քրիստոնէական մարդասիրութեան։ Յուսանք առ Աստուած՝ որ Ռուսաց և դաշնակից պետութեանց քաջարի զօրքերը իրենց հերոսական քաջութեամբ վերջ կը դնեն խորտակւող Տաճիկ կառավարութեան և հայութիւնը կազատուի շարունակ տաճիկների ձեռքով ընաջինջ լինելուց։ Հնադարեան Հայոց եկեղեցում առ Աստուած ուղղած վշտացեալ Հայոց Հայրապետի և իւր զաւակների աղօթքները այս անգամ լսելի կը լինեն և հայի համար վերջապէս հանգստութեան և ապահով կեանքի օրերը կը գան։ Առանց յուսահատուելու լարենք մեր ոյժերը՝ գործենք ու օգնենք մեր տաճակահայ եղբայրներին և քոյրերին։ Առանց յուսահատուելու հայ եկեղեցու անխորտակելի կամարների տակ աղօթենք և երգենք։ «Եկ, Տէր Յիսուս, ողորմեամեղ, ողորմութեան ժամ է արդէն, եկ Բարեխնամ, այց արա մեղ, այցելութեան ժամ է արդէն»։ Բայց որպէսողի Տէր Յիսուսը մեղ օգնի՝ նախ մենք մեղ պէտք է օգնենք, մենք ինքներս ոչինչ չպէտք է խնայենք նպաստել հայ ժողովրդի ազատագրութեան սուրբ գործին։

Աղօթենք և գործենք։

Բաքվեն Վարդապէտ